Արձանագրության 3
Գնդաձև ակացիաների ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

07.03.2019թ.
Ժամը՝ 10:40

ք. Երևան

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաքսապետյան /գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հարությունյան /բացող/, Ա. Հազարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝ Խ.Հակոբյան /ԳԱՊ/

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը նախագահողի մասին

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահեց հանձնաժողովի անդամ Ս. Մաքսապետյանը՝ համաձայն Համաձայն գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի /այսուհետ՝ Կարգ/ :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում առկա անհամապատասխանության շտկման մասին

Ընդունել ի գիտություն, որ «Պստո» ՍՊԸ և Ա/Ձ Նարեկ Մայիլյան /Կոնսորցիում/ կողմից սահմանված ժամկետում շտկվել է ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Պստո» ՍՊԸ և Ա/Ձ Նարեկ Մայիլյան /Կոնսորցիում/	Բավարար
Ա/Ձ Սիրանուշ Հովհաննիսյան	Անբավարար
Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյան	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման մասին

3.1 Հաշվի առնելով, որ ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին՝ «Պստո» ՍՊԸ և Ա/Ձ Նարեկ Մայիլյան /Կոնսորցիում/, հրավիրել բանակցությունների՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով:

3.2 Գների նվազեցման բանակցությունները կկայանան 2019 թվականի մարտի 12-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի մարտի 12-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Մաքսապետյան

Անդամներ՝ ---------- Բ. Տեր-Թովմասյան

---------- Հ. Հարությունյան

---------- Ա. Հազարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան